

Ծրագրի առանձնահատկությունները

- գիտելիքների կառուցում մաթեմատիկական կոտ հիմքերի վրա, ալգորիթմների մաթեմատիկական հիմնավորումների տրամադրում, ինչպես նաև հիմնական ալգորիթմների իրագործում սկզբից մինչ վերջ
- շեշտադրում ինչպես տվյալագիտության ու ծրագրավորման, այնպես էլ վիճակագրության վրա
- տեսության ու կիրառությունների խառնուրդ
- երիտասարդ ու փորձառու դասավանդող անձնակազմ՝ ակադեմիայից ու ինդուստրիայից
- մոտիվացված ու գրագետ ուսանողներով հարուստ, ուսման համար հաճելի միջավայր
- մասնագիտացված համակարգիչներով լաբորատորիայի առկայություն
- ժամանակակից ու թարմացվող դասընթացաշար
- անգլերեն լեզվով մասնագիտական դասախոսությունների հնարավորություն
- դասախոսներ ու թեզերի ղեկավարներ Հայաստանից և արտերկրից
- ուսումնառության ընթացքում իրականացրած մի քանի անհատական/խմբային պրոյեկտ

Միրով սպասում ենք:

Ձեր՝

Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն մագիստրոսական ծրագիր

Հասցե՝

Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ, ԵՊՀ, Ալեք Մանուկյան 1, Երևան

վեբկայք՝ <https://math.ysu.am/asds>
էլ. փոստ՝ asds.ysu@gmail.com
Հեռ՝ 091 507705, 091 202613



Մաթեմատիկայի և
մեխանիկայի ֆակուլտետ

Կիրառական
վիճակագրություն և
տվյալների
գիտություն

մագիստրոսական ծրագիր

Ինֆորմացիոն թերթիկի երկու նկարներն էլ
ստեղծված են մեքենայական ուսուցման
մեթոդներով, համակարգչի կողմից

Ծրագրի նպատակը

Ուսանողներին զինել տեսական ու կիրառական գիտելիքներով վիճակագրության ու տվյալների գիտության ոլորտում, հնարավորություն ընձեռել ստանալու արդիական ու պահանջարկ ունեցող մասնագիտություն

Ծրագրի նկարագրությունը

Տևողությունը՝ 2 տարի

- 1-ին կիսամյակ - գիտելիքների ամրապնդում ծրագրավորումից, մաթեմատիկական անհրաժեշտ առարկաներից, վիճակագրությունից
- 2-րդ կիսամյակ - դասական մեքենայական ուսուցում և վիճակագրության խորացված դասընթացներ
- 3-րդ կիսամյակ - խորացված մասնագիտական առարկաներ
- 4-րդ կիսամյակ - մագիստրոսական թեզի ներկայացում

Դասընթացների անցկացման ժամերը՝ աշխատանքային օրերին երեկոյան ժամերին, շաբաթ օրը՝ առավոտյան

Կրթաթոշակներ՝ առկա են պետպատվերով տեղեր, ինչպես նաև հնարավոր է ուսման վարձը փոխհատուցել եկամտահարկից

Ընդունելությունը՝ գրավոր քննությամբ

📖 Հաջողակ սովորելու համար անհրաժեշտ նախապայման է ունենալ նախնական գիտելիքներ գծային հանրահաշվից, մաթեմատիկական անալիզից, հավանականությունների տեսությունից և ծրագրավորման որևէ լեզվից:

Կարիերայի հեռանկարներ

Ծրագրի բարձր գնահատականներով ավարտող շրջանավարտները կարող են.

- աշխատել ինդուստրիայում որպես միջին մակարդակի (middle level) տվյալագետներ, օրինակ՝ հետևյալ ուղղություններով. համակարգչային տեսողություն (Computer Vision), ձայնային ազդանշանների մշակում (Voice and Sound Signal Processing), տեքստի ու քնական լեզվի մշակում (Natural Language Processing), մեքենայական ուսուցման կիրառություններ բժշկության մեջ
- շարունակել կրթությունը ասպիրանտուրայում՝ Հայաստանում և արտերկրում
- զբաղվել գիտամանկավարժական գործունեությամբ՝ ստանալ նոր արդյունքներ, տպագրել հոդվածներ, դասավանդել բակալավրիատի ու կարճաժամկետ մասնագիտական ծրագրերում

Մեր շրջանավարտները

- Հաջողությամբ աշխատում են հետևյալ ընկերություններում. *Picsart, Krisp, Podcastle, VMWare, Service Titan, PMI, Ameriabank, Amaros, Biosim, WorldQuant, WebbFontaine, SuperAnnotate AI, Intent.ai, Plat.ai, Portmind, SmartClick AI* և այլ:
- Դասավանդում են ԵՊՀ-ում, ՀԱՀ-ում, կարճաժամկետ կրթական ծրագրերում

Ծրագրի դասախոսական անձնակազմը

Ծրագրում դասախոսում ու մագիստրոսական թեզերը ղեկավարում են ակադեմիայի ու ինդուստրիայի փորձառու մասնագետներ Հայաստանից ու արտերկրից, ինչպես օրինակ՝

- **Կարեն Քեոյան**, PhD, ծրագրի ղեկավար, ԵՊՀ և ՀԱՀ դասախոս, ուսանողական մաթեմատիկական օլիմպիական խմբի ղեկավար, դասավանդվող առարկա՝ Basic Math for DS
- **Վազգեն Միքայելյան**, PhD, Krisp, ՄՈՒ լուծումների ճարտարապետ, դասավանդվող առարկա՝ Deep Learning
- **Շանթ Նավասարդյան**, Picsart, ՄՈՒ խմբի ղեկավար, դասավանդվող առարկա՝ Computer Vision
- **Դավիթ Շահնազարյան**, Amaros AI, ՄՈՒ մասնագետ, դասավանդվող առարկա՝ ML for Healthcare
- **Կարեն Համբարձումյան**, YerevanN հետազոտական լաբորատորիա, ՄՈՒ հետազոտող, դասավանդվող առարկա՝ NLP
- **Առնակ Դադայան**, PhD, CREST ինստիտուտի տնօրեն, Ֆրանսիա, դասավանդվող առարկա՝ Multivariate Statistics
- **Գոռ Հայրապետյան**, PhD, Microsoft, Էստոնիա, դասավանդվող առարկա՝ Data Engineering
- **Վադիմ Բորիսով**, PhD, Թյուրինգենի համալսարան, Գերմանիա, Առարկա՝ Data Mining